600.0167.23.05.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 մայիսի 2018 թվականի №167Ա
քաղ. Երևան

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա. 2018 թվականի մարտի 27-ին №Ե-27/18 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) է դիմել «Իրավաբանների և հոգեբանների միջազգային ասոցիացիա» կազմակերպության նախագահ պարոն Խաչատուր Մարոզյանը՝ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Մատակարար) կողմից մի շարք բաժանորդների առնտրային հաշվառքի սարքերի ապահավաքակցման և ստուգաչափման գործընթացը Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի №378-Ն որոշմամբ սահմանված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) պահանջների խախտմամբ իրականացնելու, ինչպես նաև ստուգաչափման արդյունքում առնտրային հաշվառքի սարքի խախտման դեպքերի հիման վրա կատարված վերահաշվարկների և բաժանորդներին ներկայացված չհիմնավորված դրամական պահանջների վերաբերյալ,

բ. Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, վերոնշյալ փաստերի ուսումնասիրության նպատակով 2018 թվականի ապրիլի 4-ից Մատակարարի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի մասին Մատակարարը տեղեկացվել է Հանձնաժողովի 2018 թվականի ապրիլի 4-ի ՈԱԲ-659Զ գրությամբ,

գ. հարուցված վարչական վարույթի առնչությամբ Մատակարարը 2018 թվականի ապրիլի 11-ի №ԿԼ/7908 գրությամբ հայտնել է, որ 2017 թվականի ընթացքում Կանոններով սահմանված կարգով իրականացվել են առևտրային հաշվառքի սարքերի ապահավաքակցում, տեղակայում և ստուգաչափում՝ ներկայացնելով նշված գործընթացների արդյունքում հայտնաբերված առևտրային հաշվառքի սարքերի խախտման դեպքերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն, նշելով նաև, որ Կանոնների 35-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման ժամանակ արտաքին զննության արդյունքում համապատասխան արձանագրություններ չկազմելու դեպքում, Կանոնների 56-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն բաժանորդներին վճարել է տուժանք: Ըստ Մատակարարի՝ վերոնշյալ ընթացակարգերը խախտելու դեպքերում Կանոններով այլ կարգ սահմանված չէ, ուստի կատարված վերահաշվարկներն անվավեր ճանաչելու հիմքեր չկան:

Հաշվի առնելով վերոնշյալը և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետը, Մատակարարը խնդրել է կայացնել բարենպաստ վարչական ակտ.

դ. Մատակարարի կողմից ներկայացված փաստարկների ուսումնասիրության նպատակով Հանձնաժողովի 2018 թվականի ապրիլի 27-ի ՈՒԲ-866Զ գրությամբ վարչական վարույթի համար սահմանված ժամկետը երկարաձգվել է 10 օրով.

ե. հարուցված վարչական վարույթի իրականացման ժամանակահատվածում բաժանորդներից բողոքներ են ստացվել նաև 2018 թվականի ընթացքում իրականացված առևտրային հաշվառքի սարքերի փորձաքննությունների արդյունքում կատարված վերահաշվարկների վերաբերյալ, որոնց առնչությամբ վարչական վարույթի համար սահմանված ժամկետը կրկին երկարաձգվել է 10 օրով, և Հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 10-ի ՈՒԲ-965Զ գրությամբ Մատակարարից պահանջվել է ներկայացնել տեղեկատվություն 2017-2018 թվականների ընթացքում իրականացված փորձաքննությունների, վերահաշվարկների, դրանց առնչությամբ ստացված բողոքների քանակի, ինչպես նաև վերահաշվարկները արտաքին միջամտություն համարելու հիմքերի վերաբերյալ.

զ. Մատակարարը 2018 թվականի մայիսի 17-ի №ԿԼ/11094 գրությամբ հայտնել է, որ 2018 թվականի հունվարի 1-ից մայիսի 1-ն ընկած ժամանակահատվածում իրականացվել է 2484 փորձաքննություն, որի արդյունքում, Կանոնների 46-րդ կետի համաձայն, կատարվել է 1168, իսկ 47 կետի համաձայն՝ 1316 վերահաշվարկ: Կանոնների 46-րդ կետի փոխարեն 47-րդ կետի համաձայն վերահաշվարկ կատարելու առնչությամբ Մատակարարը հայտնել է, որ թեև փորձաքննության եզրակացություններում նշված չէ, որ խախտումը արտաքին միջամտության հետևանք է, սակայն խախտումների բնույթն ուսումնասիրելիս ակնհայտ է դառնում, որ դրանք չեն կարող առաջանալ առանց արտաքին միջամտության: Մատակարարը հայտնել է նաև, որ դիմել է Չափագիտության ազգային մարմին՝ նշվածի վերաբերյալ վերջինիս դիրքորոշումն ստանալու նպատակով.

է. Համաձայն Կանոնների 35-րդ կետի 1-ին ենթակետի՝ առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման դեպքում Մատակարարը արտաքին զննության արդյունքում կազմում է առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի, առևտրային հաշվառքի սարքի խախտված լինելու մասին արձանագրություն, որը ստորագրում են Մատակարարը և բաժանորդը կամ նրա ներկայացուցիչը.

ը. առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում վերահաշվարկը կատարվում է Կանոնների 46-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, երբ, հնարավոր չի եղել որոշել առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի սխալանքի թույլատրելի տիրույթից բաժանորդին մատուցված ծառայության քանակի շեղումը, և առևտրային հաշվառքի սարքի խախտումն արտաքին միջամտության հետևանք չէ.

թ. առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում, եթե այն արտաքին միջամտության հետևանք է, վերահաշվարկը կատարվում է Կանոնների 47-րդ կետի համաձայն.

ժ. համաձայն Կանոնների 2-րդ կետի 16-րդ ենթակետի՝ առևտրային հաշվառքի սարքի խախտում համարվում է չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությամբ հաստատված առևտրային հաշվառքի սարքի առանձին մասի խափանումը կամ վնասումը, կամ կապարակնիքի բացակայությունը կամ վնասումը, կամ կեղծումը, կամ առևտրային հաշվառքի սարքի բնականոն աշխատանքի որևէ այլ խաթարումը՝ արտաքին միջամտությամբ կամ առանց դրա.

ժա. համաձայն կանոնների 7-րդ կետի՝ չի թույլատրվում բաժանորդից պահանջել կատարել վճարներ, տրամադրել հատուցում, ներկայացնել տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն Կանոններով, պայմանագրով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով.

ժբ. հոլոգրաֆիկ կնիքի խախտման դեպքում Կանոններով, պայմանագրով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով վերահաշվարկ նախատեսված չէ: Հոլոգրաֆիկ կնիքի հետ կապված խնդիրները կարգավորվում են Կանոնների 27-րդ, 27.1 և 28-րդ կետերով.

ժգ. վարչական վարույթի շրջանակում 664 վերահաշվարկման փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ խախտելով է Կանոնների 35-րդ կետի 1-ին ենթակետը, նշված բոլոր դեպքերում առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման արձանագրություն չի կազմվել, 62 դեպքերում Մատակարարը վերահաշվարկ է կատարել նաև, երբ փորձագիտական եզրակացությամբ կանոնների 2-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված խախտում չի արձանագրվել, սակայն հոլոգրաֆիկ կնիքի վրա արձանագրվել է միջամտության առկայություն, որով խախտել է Կանոնների 7-րդ կետը, իսկ 461 դեպքերում, երբ փորձագիտական եզրակացությամբ փաստվել է հաշվառքի սարքի խախտում, սակայն չի նշվել, որ խախտումը արտաքին միջամտության հետևանք է, Մատակարարը Կանոնների 46-րդ կետի 2-րդ ենթակետի փոխարեն վերահաշվարկը կատարել է Կանոնների 47-րդ կետով սահմանված կարգով՝ խախտելով Կանոնների 46-րդ կետի 2-րդ ենթակետը: Նման պարագայում ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթի կարճման կամ բարենպաստ վարչական ակտ ընդունելու հիմքերը բացակայում են,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 47.1 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 2-րդ մասի 3-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կանոնների 7-րդ կետը և 46-րդ կետի 2-րդ ենթակետը խախտելու համար Մատակարարին տուգանել 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով:
2. Մատակարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից.

1) երկշաբաթյա ժամկետում սույն որոշման 1-ին կետում նշված գումարը 900005001343 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) երկամսյա ժամկետում ուսումնասիրել 2017 և 2018 թվականների ընթացքում իրականացված վերահաշվարկների փաստաթղթերը և, բոլոր այն դեպքերում, երբ՝

ա. վերահաշվարկը պայմանավորված է միայն հոլոգրաֆիկ կնիքի վրա արտաքին միջամտության առկայությամբ, և կանոնների 2-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված խախտումներ չեն հայտնաբերվել՝ չեղարկել վերահաշվարկները, վերադարձնել բաժանորդներից գանձված գումարները և չեղարկված վերահաշվարկների ցանկը ներկայացնել հանձնաժողով.

բ. Կանոնների 35-րդ կետի համաձայն առնտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման արձանագրություն չի կազմվել, Կանոնների 56-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված կարգով և չափով վճարել տուժանքը և վճարված տուժանքների ցանկը ներկայացնել Հանձնաժողով.

գ. փորձագիտական եզրակացությամբ չի փաստվել, որ խախտումը արտաքին միջամտության հետևանք է, սակայն վերահաշվարկը կատարվել է Կանոնների 47-րդ կետով սահմանված կարգով՝ ճշգրտել կատարված վերահաշվարկները՝ ըստ Կանոնների 46-րդ կետի 2-րդ ենթակետի, և ճշգրտված վերահաշվարկների ցանկը ներկայացնել հանձնաժողով:

3. Սահմանել, որ բոլոր այն դեպքերում երբ Կանոնների 35-րդ կետի համաձայն առնտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման արձանագրություն չի կազմվել, և բաժանորդը չի համաձայնել Կանոններով սահմանված կարգով խմելու ջրի վերահաշվարկված քանակի դիմաց վճարման ենթակա գումարը վճարելու պահանջին, Մատակարարը վեճը լուծում է դատական կարգով՝ մինչև վեճի վերջնական լուծումը չդադարեցնելով բաժանորդին ծառայությունների մատուցումը:

4. Մատակարարին՝ ընդունել ի գիտություն, որ՝

1) սույն որոշումը չի սահմանափակում սպառողի կամ Մատակարարի իրավունքը՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պահանջելու վնասի հատուցում.

2) Մատակարարը իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մատակարարին օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
23 մայիսի 2018թ.